**Մարիամ Հակոբյան**

# ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.

***Հիմնաբառեր.*** *Հունահայոց թեմական առաջնորդարաններ, Բալկանյան թերակղզի, Սալոնիկ, Գերագույն հոգևոր խորհուրդ, Աթենք, Հունաստանի արտաքին գործերի նախարարություն:*

## ՄՈՒՏՔ

Հայտնի է, որ հայաստանյաց առաքելական եկեղեցու հոգևոր վարչատարածքային միավոր հանդիսացող թեմական առաջնորդարանի կազմավորման նախապայման է հանդիսացել հայ համայնքի առկայությունը: Այդ առումով կարևորություն է ներկայացնում հունահայ համայնքի ստվարացման գործընթացը, որն էլ խթան հանդիսացավ նոր թեմական առաջնորդարանների կազմավորման համար:

## ՀՈՒՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՏՎԱՐԱՑՈՒՄԸ

Հունահայ համայնքի ստվարացման գործընթացը սկսվել է դեռևս XIX դ. վերջին, երբ 1895-1896 թթ. Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածից և հայկական քաղաքական կուսակցությունների կողմից հակակառավարական միջոցառումների (Գում Գափու, Բանկ Օտոման, Եըլտըզի մահափորձ և այլն) ձախողումից հետո արևմտահայերը սկսում են տեղափոխվել Հունաստան՝ ստանալով հունական կառավարության աջակցությունը[1]:

Օսմանյան կայսրությունից դեպի Հունաստան հայ գաղթականության հաջորդ մեծածավալ արտահոսքը տեղի է ունեցել 1909 թ. Ադանայի կոտորածից և 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմներից հետո, երբ Սալոնիկի շրջանը միացվում է Հունաստանին[2]: 1922 թ. սեպտեմբերի 14-ին Իզմիրի աղետալի դեպքերից հետո[3] 50 հազար իզմիրաբնակ հայեր, իսկ 1922 թ. Կիլիկիայի հայաթափումից հետո՝ շուրջ հինգ հազար կիլիկիահայեր տեղափոխվում են Հունաստան և բնակվում հիմնականում Աթենք, Գոքինիա, Լավրիոն, Սիթա, Քիրթսու քաղաքներում:

1922 թ. հոկտեմբերի 11-ին Անտանտի երկրների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա) և քեմալականների միջև կնքվում է Մուդանիայի զինադադարը, որով ավարտվում է թուրք-հունական երկրորդ պատերազմը: Զինադադարի համաձայն Արևելյան Թրակիայում[4] գտնվող հունական զորամասերը դուրս էին բերվելու, իսկ քրիստոնյա բնակչության, այդ թվում՝ հայ տարագիրների անարգել հեռացումը կատարվելու էր բրիտանական բանակի հսկողությամբ[5]: Թրակիայի տեղահանված հայությունը հիմնականում ապաստան է գտնում հյուսիսային Հունաստանում:

Ընդհանուր առմամբ, եթե մինչև 1922 թ. Հունաստանում ապրում էր շուրջ 12 հազար հայ, ապա նույն թվականի վերջին նրանց թիվը աճել էր մի քանի անգամ[6]: Այսպես, Հունաստանի արտաքին գործերի նախարարության հաշվարկով Հունաստանում ապրում էր 120 հազար հայ,

---

** Հոդվածը ներկայացվել է 15.10.2019 թ ., գրախոսվել՝ 10.05.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

*[1] Այդ տարիներիներին Հունաստան են տեղափոխվել շուրջ 1000 հայ գաղթական, տե՛ս Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Ե., 1967, էջ 103:*

*[2] Տե՛ս նույն տեղում, էջ 104:*

*[3] 1922 թ. սեպտեմբերի 9-ին քեմալական ուժերը ներխուժում են Իզմիր (Զմյուռնիա), իսկ սեպտեմբերի 14-ին քաղաքը հրդեհվում է:*

*[4] Տե՛ս Ղասաբյան Զ., Նիկոմեդիայի և Արևելյան Թրակիայի հայաթափումը (1921-1922), Ե., 1998, էջ 27:*

*[5] Տե՛ս նույն տեղում:*

*[6] Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու առաջնորդարանի արխիվային փաստաթղթի համաձայն, մինչև 1922 թ. վերջը Հունաստանում ապրել են շուրջ 60 հազար հայ, ինչը մեր կարծիքով նվազեցված ցուցանիշ է, տե՛ս «Հունաստանի հայ գաղութը այսօր», Փարիզի սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու առաջնորդարանի արխիվ, (այսուհետև՝ «Հունաստանի հայ գաղութը այսօր»):*

որոնցից միայն 20 հազարը որբեր էին[1], «Ջորնալ դ' Իտալիա» թերթը նշում էր 200 հազար, իսկ Հունաստանի հայ ազգային մարմինների տվյալների համաձայն նրանց թիվը 100 հազար էր[2]:

Հայության թերևս վերջին մեծածավալ գաղթը դեպի Հունաստան տեղի է ունեցել 1923 թ. հուլիս 24-ի Լոզանի պայմանագրի կնքումից հետո, երբ Թրակիան բաժանվում է երեք երկրների միջև՝ Բուլղարիայի (հյուսիսային Թրակիա), Հունաստանի (Արևմտյան Թրակիա), Թուրքիայի (Արևելյան Թրակիա): Արևելյան Թրակիայում բնակվող հայերը, չցանկանալով մնալ Թուրքիայի տիրապետության տակ, անցնում են Հունաստան:

Այսպիսով վերոնշյալ իրադարձությունները ժողովրդագրական կտրուկ աճից բացի, անջնջելի հետք թողեցին նաև հունահայ համայնքի ղեկավար կառույցների՝ թեմական առաջնորդարանների վարչական կառուցվածքի ձևավորման վրա:

## ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Դեռևս Օսմանյան կայսության շրջանում Թրակիայի հայոց թեմը Կ. Պոլսի պատրիարքության ներքո գործող առանձին թեմ էր[3]: 1923 թ. Լոզանի պայմանագրից հետո Արևելյան Թրակիայի և Նիկոմեդիայի հայ տարագիրներից մոտ 40-50 հազարը թեմական առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանի առաջնորդությամբ հաստատվում են Սալոնիկում, որի հետևանքով Էտիրնե-Ռոդոսթոյի (Թրակիա) միացյալ առաջնորդարանը վերափոխվում և ստանում է «Թրակիայի և Մակեդոնիայի» առաջնորդարան անվանումը[4], որի կենտրոնատեղին դառնում է Սալոնիկ (Սելանիկ) քաղաքը[5]:

Իզմիրի հոգևորականության հիմնական հատվածը ապաստանում է Աթենքում և մեծ ջանքերի գնով կարողանում է ստեղծել «Հին Հունաստան և կղզիներ» անունը կրող առաջնորդարանը, որի կենտրոնատեղին դառնում է Աթենք քաղաքը: Այսպիսով Հունաստանում կազմավորվում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ենթակա և վարչականորեն միմյանցից անկախ գործող, երկու թեմական առաջնորդարաններ: «Թրակիայի և Մակեդոնիայի» առաջնորդարանը անմիջականորեն ենթարկվում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին[6], իսկ «Հին Հունաստան և կղզիներ»-ի առաջնորդարանը, թեև կրոնապես կապված էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, սակայն ղեկավարվում էր Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից[7]: Կ. Պոլսի պատրիարքի կողմից «Թրակիայի և Մակեդոնիայի» թեմի հոգևոր առաջնորդ է նշանակվում Երվանդ եպիսկոպոս Փերտհաճյանը, իսկ «Հին Հունաստան և կղզիներ»-ի թեմի առաջնորդ՝ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանը, ով Իզմիրի գաղթականների հետ Աթենք էր տեղափոխվել 1922 թ. սեպտեմբերին: Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանի պաշտոնաթող լինելուց հետո թեմական պատվիրակ է նշանակվում Կարապետ եպիսկոպոս Մազլմյանը: Վերջինս տեղի թեմական կյանքը կազմակերպելուց հետո երեսփոխանական ժողովի կողմից ընտրվում է թեմական առաջնորդ: Կարճ ժամանակ անց Աթենքի նորակազմ թեմական առաջնորդարանը ճանաչում է ստանում հունական կառավարության կողմից[8]: Թեմական առաջնորդարանը դառնում է Աթենքի Ս. Աստվածածին եկեղեցին:

1925 թ. դրությամբ Հունաստանի հայ համայնքում ըստ թեմական առաջնորդարանների վարչական բաժանման, հայությունը ուներ հետևյալ սփռվածությունը[9]:

---

*[1] Բուլղարիայում ապաստանել էր 25-30 հազար հայ, Ռումինիայում՝ 30-40 հազար (տե՛ս Ղասաբյան Զ., նշվ. աշխ., էջ 29):*

*[2] Տե՛ս «Նոր օր», Աթենք, 1925, № 411: 1924 թ. դրությամբ Հունաստանի հայության շուրջ 40 տոկոսը գաղթում է Ֆրանսիա, Բուլղարիա, Ռումինիա և այլ երկրներ (տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 106):*

*[3] Թրակիան և Մակեդոնիան թուրքական տիրապետության եվրոպական մասն էին կազմում և կոչվում Ռումելի (տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 100):*

*[4] Թեմական առաջնորդարանը կոչվել է նաև Նոր Հունաստան:*

*[5] Տե՛ս Ղասաբյան Զ., նշվ. աշխ., էջ 29:*

*[6] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 409, ց. 1, գ. 5219, թթ. 9-10:*

*[7] Տե՛ս նույն տեղում, գ. 5243, թթ. 1, 4: Տե՛ս նաև «Յունահայ տարեգիրք», Ա տարի, Աթէնք, 1927, էջ 304:*

*[8] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5219, թթ. 10-11:*

*[9] Համաձայն Թեոդիկի տարեցույցի՝ 1924 թ. Հունաստանում ապրում էր 53.909, իսկ 1925թ.՝ 55 հազար հայ (տե՛ս Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, Վենետիկ, 1926, էջ 577-578):*

*«Հին Հունաստան և կղզիներ»-ի թեմական առաջնորդարան:*

Աթենք և արվարձաններ՝ Աթենք (1338 հայ), Բիրե-Լիբազմա (6745 հայ), Ֆիքս (6264 հայ), Գոքինիա (7639 հայ), Սինկրու (2171 հայ), Ամարուս (252 հայ), Քիֆիսիա (63 հայ), Բոտարաթիս (148 հայ)[1], ընդամենը՝ 24620 հայ:

Պելեպոնեսի շրջան՝ Կորոնթոս (225 հայ), Նուբլիոն (184 հայ), Գալամաթիա (343 հայ), Բարաբիղմաթա (489 հայ), Նիսի (58 հայ), Քիբատիվիա (23 հայ), Բիրկին (560 հայ), Պադրաս (560 հայ), Էգիոն (189 հայ), Տրիպոլի (50 հայ), Քիաթո (89 հայ), Վրահաթի (36 հայ), ընդամենը՝ 2434 հայ:

Կղզիներ ՝ Կրետե (1673 հայ, որից Սիթիա՝ 201, Գանտիա 891, Ռեթիմնո՝ 459, Հանիա՝ 122), Թեսալոնիա (2409 հայ, որից Միտիլի՝ 1245, Քիոս՝ 174, Արկովթոլի 250, Լիքսուրի՝ 50, Սամոս՝ 160, Կորֆու՝ 340, Զաքինթոս՝ 50, Սիրա՝ 140), ընդամենը՝ 4082 հայ:

Հունաստանի այլ շրջաններ՝ Մեսոլոնկի և Աղրիոն (50 հայ), Եանիա (50 հայ), Բրեզելա (14 հայ), Վոլո (1200 հայ), Լավրիոն (220 հայ), Գամսարիա (150 հայ), Լարիսսա (250 հայ), ընդամենը՝ 1934 հայ:

Հայության ընդհանուր թիվը «Հին Հունաստան և կղզիներ»-ի թեմական առաջնորդարանի ենթակա շրջաններում կազմում էր 33050 հայ:

*«Թրակիայի և Մակեդոնիայի» թեմական առաջնորդարան:*

Արևմտյան Թրակիա՝ Տրամա և գյուղեր (1031 հայ), Գավալա (1172 հայ), Քսանթի (499 հայ), Կիվմիլճինիա (892 հայ), Տետե-Աղաճ (873 հայ), Տիմոթեքա (265 հայ), Գում Ջիֆթլիկ (52 հայ), Սարը խտր (9 հայ), Գուլելի Պուրիաս (22 հայ), Ուլի (83 հայ), Կերե (16 հայ), Սոֆլու (69 հայ), ընդամենը՝ 4983 հայ:

Մակեդոնիա՝ Սելանիկ (5598 հայ), Սերեզ և գյուղեր (797 հայ), Գոզանա և 32 գյուղեր (1392 հայ)[2], ընդամենը՝ 7787 հայ:

Հայության ընդհանուր թիվը «Թրակիայի և Մակեդոնիայի» թեմական առաջնորդարանի ենթակա շրջաններում կազմում էր 12770 հայ:

Վերոնշյալ վիճակագրությունը, փոփոխական էր, քանի որ հայությունը, սոցիալական պայմաններից ելնելով, կղզիներից և արվարձաններից հաճախ տեղափոխվում էին Աթենք: Այս վիճակագրությունից պետք է առանձնացնել այդ շրջանում Խորհրդային Հայաստան տեղափոխված շուրջ 3199 հայ գաղթականներին, որոնցից 600-ը տեղափոխվել էին «Հին Հունաստան և կղզիներ»-ի, իսկ մնացյալ 2599-ը՝ «Թրակիայի և Մակեդոնիայի» թեմական շրջաններից[3]:

Ներքին տեղաշարժերից և Խորհրդային Հայաստան տեղափոխվելուց բացի հունահայության որոշակի հատված մեկնում էր այլ երկրներ: Ընդհանուր առմամբ, 1929 թ. հունվարի 1-ից հոկտեմբերի 31-ը Հունաստանից Ֆրանսիա են տեղափոխվել 846, Արգենտինիա՝ 426, Եգիպտոս՝ 25, Սիրիա՝ 48, Հյուսիսային Ամերիկա՝ 33, Եվրոպա՝ 19, Կիպրոս՝ 11, Խորհրդային Ռուսաստան՝ 9 հայ: Դրան նախորդած 20 ամիսների ընթացքում, ըստ Աթենքի առաջնորդարանի կողմից ստացված վկայագրերի, Հունաստանից մեկնել էր շուրջ 1470 հայ: Այնուհետև, մինչև 1930-ական թթ. առաջին կեսը, անցաթղթերի ձեռք բերման դժվարություններով պայմանավորված, արտագաղթը գրեթե դադարում է[4]:

Հունաստանի հայ բնակչության ակտիվ տեղաշարժի հետևանքով արդեն 1935 թ. դրությամբ «Հին Հունաստան և կղզիներ»-ի թեմում հաշվում էր 25 հազար հայ, «Թրակիայի և Մակեդոնիայի» թեմում՝ 20 հազար հայ[5]: Իսկ 1939 թ. Հունաստանում հայերի թիվը կտրուկ նվազել է՝ հասնելով 30 հազարի[6]:

---

[1] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5218, թ. 3:*

[2] *Տե՛ս նույն տեղում, թ. 6:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

[4] *Տե՛ս Նուբարյան գրադարան, Արամ Անտոնյանի հավաքածու, communauté Grece, Liban, Syrie, Iran, (այսուհետև՝ communauté Grece...):*

[5] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 209, թ. 3:*

[6] *Տե՛ս «Հունաստանի հայ գաղութը այսօր»:*

**ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԸ**

1920 թ. կեսերից, երբ համայնքային կյանքը քիչ թե շատ կայունացել էր, բազմիցս քննարկվում է թեմական առաջնորդարանների միավորման հարցը: Այն հատկապես սուր բնույթ է կրում Թրակիայի և Մակեդոնիայի թեմական առաջնորդ Երվանդ եպիսկոպոս Փերտհաճյանի կողմից թեմական աթոռը լքելուց և Բուլղարիա հեռանալուց հետո: Հոգևորականության շրջանում ծայր առած տարակարծություններին վերջ տալու և թեմական առաջնորդարանի գործունեության հետագա ճակատագիրը որոշելու համար Գևորգ Ե կաթողիկոսի կոնդակի համաձայն Գերագույն հոգևոր խորհուրդը Սալոնիկ է ուղարկում Աթենքի թեմական առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Մազլմյանին[1], որի առաքելությունը հանդիսանալու էր ազգային-եկեղեցական ժողովների հրավիրման ընթացքում թեմական առաջնորդարանների միավորման հարցի քննարկումը[2]:

1926 թ. հունվարի 19-ի Գևորգ Ե կաթողիկոսը Կարապետ եպիսկոպոս Մազլմյանին ուղղված կոնդակում նշում էր հետևյալը. «Յորդոր յարտումք առ Ձեզ համայն ժողովրդականաց, որոշեաց մերոց գաղթելոց ի Յունաստան միանալ յամայն բարի ձեռնարկութիւս առաջնորդիդ ու վարչական ատեից և հաստատութենց զի ի միութեն ու համերաշխ գործակցութեան միայն կարէք կրող ու զոկալ դժուարութեանց և ձախորդութեանց, որք բաժին են ամենայն գաղթական ժողովրդեան որպէս ցուպս կղրիալ ի ծառոց կենդանութեան...»[3]: Փաստորեն, կաթողիկոսական կոնդակի համաձայն, Կարապետ եպս. Մազլմյանը միաժամանակ ստանձնում է երկու թեմական առաջնորդարանների կառավարումը:

Աթենք ժամանելուց հետո Կարապետ եպս. Մազլմյանը հակադաշնակցական կեցվածք է որդեգրում, նույնիսկ նրա դիմումների հիման վրա մի քանի դաշնակցականներ են ձերբակալվում: Նրա աթոռակալմանը կողմնակից էին ռամկավար և հնչյակյան կուսակցությունները, որոնք փորձում էին այդ միջոցով թեմի բարձրագույն կենտրոնական կառույցում՝ ազգային վարչությունում ձայների մեծամասնություն ստանալ՝ դրանով իրենց ձեռքում կենտրոնացնելով համայնքային կյանքի կառավարումը[4]: Ահա հենց այս ներկուսակցական կռիվների պատճառով թեմական առաջնորդին չի հաջողվում իրականացնել Ամենայն հայոց հայրապետի հանձնարարականները և հաստատվել Սալոնիկում, քանի որ տեղի ՀՅԴ կառույցը ամեն կերպ խոչընդոտում է նրա գործունեությանը, և նա տեղական կուսակալի պահանջով ստիպված է լինում վերադառնալ Աթենք[5]:

Հունահայ «Արազ» թերթը անդրադառնալով այդ միջադեպին, նշում էր, որ Կարապետ եպիսկոպոս Մազլմյանի արտաքսման պատճառը նրա՝ խորհրդային իշխանության և քեմալականների գործակալը լինելն էր. «Ինչ կը վերաբերի Մազլըմեանի՝ ան այլեւս բարոյապէս չքացած է հայ ժողովուրդի աչքին, եթէ նոյն իսկ միջոցներ գտնէ իր քաղաքական բարեյուսութիւնը վերահաստատելու և թոյլատրուի մնալ Յունաստանի մէջ: Ան մանաւանդ այլեւս մեռած է իբր հոգեւորական, և չի կրնար այլեւս թեմի մը գլուխը պահուիլ՝ եթէ Էջմիածնէն հազար կոնդակ ալ տեղայ»[6]:

Այդ հարցում հունական մամուլը այլ լուրջ դրդապատճառներ էլ էր ներկայացնում: Այսպես «Նեոս Կոսմոս» թերթը գրում էր, որ հունական իշխանությունների կողմից եպիսկոպոսի հետապնդման փորձերը նոր չէին: Նա մեղադրվում էր հունական բանակի գաղտնի փատաթղթերը, մեծարժեք պատերազմական հատակագծերը գողանալու մեջ: Հունական արտաքին գործերի նախարարության պաշտոնական գրությունների համաձայն՝ Բանդրմա քաղաքի հոգևոր առաջնորդ եղած ժամանակ՝ 1921 թ., երբ հայերն ու հույները կռվել են թուրքերի դեմ, նա աջակցել է քեմալականներին: Ի վերջո 70-ամյա արքեպիսկոպոսի դեմ եղած մեղադրանքներն այնքան շատ

---

*[1] 1920 թ. դեկտեմբերի 25-ի կաթողիկոսական կոնդակի համաձայն սփյուռքյան թեմերի կառավարման անմիջական վերահսկողությունը, թեմերի համար առանձին սահմանադրություն հաստատելուց հետո, իրականացնելու էր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:*

*[2] Տե՛ս ՀԱԱ, նույն տեղում, գ. 5244, ց. 1, թթ. 1-2 շրջ.:*

*[3] Նույն տեղում, գ. 5215, թթ. 4-5:*

*[4] Տե՛ս «Յունահայ տարեգիրք», էջ 282:*

*[5] Հայաստանի ազգային արխիվում պահվում են մի շարք վավերագրեր, որոնք վկայում են Կարապետ եպիսկոպոս Մազլմյանի՝ Խորհրդային Հայաստանի համակիր և հակադաշնակցական անձ լինելու մասին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 56, թ. 2):*

*[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5235, թ. 1:*

են լինում, որ ներքին գործերի նախկին նախարարն անձամբ է ստորագրում Կարապետ եպիսկոպոս Մազլմյանի վտարման հրամանագիրը, որը կիրառվում է հաջորդ նորանշանակ նախարար Խլորասի կողմից[1]: Այսպիսով, ամփոփելով կարող ենք շեշտադրել, որ թեմական առաջնորդարանների մասնատված կարգավիճակի երկարաձգումը պայմանավորված էր ոչ այնքան հոգևոր, որքան միջկուսակցական հակասությունների պատճառով:

Հարկ է նշել, որ հունահայ հոգևորականության շրջանում երկու հոգևոր կառույցների միավորման հարցի շուրջ միակարծիք մոտեցում չկար: Դեռևս 1925 թ. դեկտեմբերի 23-ին «Թրակիայի և Մակեդոնիայի» առաջնորդական փոխանորդ Արիստակես քահանա Մալաքյանը Գևորգ Ե-ին գրած նամակում նշում էր, որ երկու կառույցների միացումը բազմաթիվ անախորժությունների կարող էր հանգեցնել, որոնք առաջին հերթին բացասական ազդեցություն կթողնեին տեղի գաղթականության վրա[2]: Այնինչ, նույն շրջանում «Թրակիայի և Մակեդոնիայի» առաջնորդարանի եկեղեցական վարչությունը Ամենայն հայոց հայրապետին ուղղված նամակում խնդրում էր զարկ տալ կառույցների միավորման գործընթացին: Ի վերջո, 1926 թ. հունվարի 18-ի և փետրվարի 11-ի պաշտոնագրերով Գերագույն հոգևոր խորհուրդը, քննարկելով Թրակիայի եկեղեցական վարչության գրությունը, թեմական առաջնորդարանների միավորման առաջարկը մերժում է[3]: Թեմական առաջնորդարանը հոգևորից զատ առաջին հերթին ազգային, հայապահպան կառույց էր հանդիսանում, ուստի մեր կարծիքով թեմական առաջնորդարանների միավորումը հունահայ համայնքային կյանքի կենտրոնացման խթան կհանդիսանար: Ցավոք այդ խնդրի լուծումը, ինչպես արդեն նշվեց, կուսակցական ներհակությունների պատճառով հեշտ ընթացք ունենալ չէր կարող: 1930 թ. «Հին Հունաստան և կղզիներ»-ի ազգային վարչությունը կազմալուծված էր: Պատգամավորական ժողով գոյություն չուներ, իսկ նոր ընտրություններ կազմակերպելու փորձերը ավարտվել էին անհաջողությամբ[4]: Նույն թվականին Սալոնիկի թաղական խորհրդի որոշմամբ «Թրակիայի և Մակեդոնիայի» թեմական առաջնորդ է կարգվում Հովսեփ եպիսկոպոս Կարապետյանը և 1931 թ. Գերագույն հոգևոր խորհուրդը հայրապետական կոնդակների միջոցով հաստատում է ընտրությունը և առաջարկում նորանշանակ առաջնորդին արագորեն Կալիֆորնիայից տեղափոխվել Սալոնիկ, բայց առաջնորդի տեղափոխման գործընթացը հետաձգվում է:

1937 թ. մայիսի 28-ին Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը նոր կոնդակ է ուղարկում Հովսեփ եպիսկոպոս Կարապետյանին, որտեղ մասնավորապես նշվում էր. «...արդ մենք որպէս Հայրապետ եւ կաթողիկոս Հայաստանեայց եկեղեցւոյ եւ լրութեան Ազգիս, Այսու Հայրապետական կոնդակաւս հաստատելով զընտրութիւնն, կարգեմք զՏէր Յովսէփ եպիսկոպոսն ի բարձր պաշտօն Առաջնորդի թեմիդ, մաղթելով, զի նա փորձառութեամբ իւրով եւ եռանդութեամբ, զօրացեալ փոխադարձ օժանդակութեամբ Ձերով, կատարեսցէ զպարտիս, զեղեալս ի վերայ նորա...»[5]: Հովսեփ եպիսկոպոս Կարապետյանը, հունարենին չտիրապետելու, ինչպես նաև Կալիֆորնիայի երեսփոխանական ժողովի կողմից տեղի թեմի առաջնորդական տեղապահ նշանակվելու պատճառով, չի կարողանում ժամանել Սալոնիկ[6]:

Այսպիսով, 1938 թ. դրությամբ Հունաստանի երկու հատվածներում գոյություն ունեցող ազգային մարմինները շարունակում էին գործել առանձին, որի հետևանքով «մեծ ու փոքրազգ. մարմինները տակաւին չեն հասած այն վիճակին ուր յայտնի ըլլան գլուխն ու թեւերը, իրարու օղակուած ներդաշնակ գործակցութեամբ մը ինչ որ մեծապէս պիտի դիւրացնէր շատ մը կենսական խնդիրներու լուծումը»[7]:

1938 թ. հունվարի 14-ի Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի կոնդակով Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հերթական անգամ ճանաչում է «Թրակիայի և Մակեդոնիայի» թեմի անկախությունը և թեմական առաջնորդ կարգում Ս. Երուսաղեմի միաբան Հուսիկ վարդապետ

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 1:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 5215, թ. 1:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 5216, թ. 1:
[4] Տե՛ս Նուբարյան գրադարան, communauté Grece...:
[5] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5240, թ. 4:
[6] Տե՛ս նույն տեղում, թթ. 5-6:
[7] Տե՛ս Նուբարյան գրադարան, communauté Grece...:

Ավետիսյանին[1]: Աթենքի թեմական առաջնորդը վերոնշյալ կոնդակը մի քանի անգամ ուղարկում է Հունաստանի արտաքին գործերի նախարարությանը: Երկար դիմումներից և բանակցություններից հետո, հակառակ բոլոր ջանքերին, արտաքին գործերի նախարարությունը ոչ միայն չի ճանաչում Թրակիայի և Մակեդոնիայի՝ որպես առանձին թեմ գործելու կարգավիճակը, այլև 1939 թ. օգոստոսի 5-ի պաշտոնագրով հանձնարարում է Աթենքի առաջնորդին զբաղվելու երկու առաջնորդարանների միավորման աշխատանքներով:

Սակայն Աթենքի թեմական առաջնորդը չի շտապում այդ հանձնարարությունը կատարել և 1940 թ. հունիսի 7-ին Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին գրած նամակում նշում է, որ սպասում է այդ հարցում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի համաձայնությանը[2]: Այսպիսով, թեմական առաջնորդարանների միավորման խնդիրը, որը սկզբնավորվեց 1920-ական թթ. կեսերին, որոշակի ընդմիջումներով շարունակվեց մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկումը և այդպես էլ լուծում չստացավ:

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Այսպիսով, 1895-1923 թթ.հունահայ համայնքի ստվարացման արդյունքում 1920-ական թթ. ձևավորվում են համայնքի ղեկավար կառույց հանդիսացող երկու թեմական առաջնորդարանները՝ Աթենք և Սալոնիկ կենտրոններով: Հունական իշխանությունը ճանաչում էր միայն Աթենքի թեմական առաջնորդարանի լիազորությունները, որն էլ ներկայացնում էր հունահայ համայնքը պետության առջև: 1920-1930-ական թթ. ընթացքում Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսի ձեռնարկները և թեմական առաջնորդարանների միավորման ուղղված մյուս ջանքերը, այդպես էլ որևէ դրական արդյունք չունեցան: Թեև հաջորդ կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանը հրաժարվում է թեմական առաջնորդարանները միավորելու ծրագրից և ճանաչում «Թրակիայի և Մակեդոնիայի» թեմի անկախությունը, որը չի վավերացվում հունական իշխանության կողմից :

***Мариам Акопян, ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.*** После Первой мировой войны армянская община в Греции претерпела значительные изменения в результате военных действий на Балканском полуострове, с одной стороны, и увеличения числа армян, с другой. Кроме резкого демографического роста и перемещения населения, изменению подверглось и руководство общины – епархия, которая была разделена на две части, где развернулись межпартийные противоречия. Предпринятые греческими властями меры по их объединению, продолжавшиеся до начала Второй мировой войны, никаких положительных результатов не дали.

***Ключевые слова:*** *армянские епархиальные резиденции в Греции, Балканский полуостров, Салоники, Верховный духовный совет, Афины, Министерство иностранных дел Греции.*

***Mariam Hakobyan, THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.*** On the one hand the number of Armenians increased in the Balkan Peninsula after the World war I, on the other hand, as a result of military operation here, Greek-Armenian community underwent considerable transformation. In addition to rapid demographic growth and displacement, the community leadership structure, the diocese, was divided into two sections, where intra-party disputes arosed. Their unification by the Greek authorities, which continued until the outbreak of World war II, did not produce any positive results.

***Key words:*** *Primacy of Greek-Armenian dioceses, Balkan Peninsula, Thessaloniki, Supreme spiritual counsel, Athens, Foreign affairs ministry of Grecce.*

---

[1] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5245, թ. 2:*

[2] *Տե՛ս նույն տեղում, գ. 5249, թ. 19:*